կան պիտանի տեղեկութիւններ տալ։ Այլ ըստ որում հասարակաց ընթեռնլի և նոր բազոյն պատմութիւնք՝ է իր գրոց երկրորդ հատածը, որ է պատմութիւն Թաթարաց արշաւանացն 'ի Հայս, որ և հեղինակիս բուն նպատակն եղած է, ինչպէս ինքն ալ յայտնապէս նախաշաւիղ կ'անուանէ անկէ առաջ պատմածները. յորում հարուածոց և կոտորածից պատմութիւններէն դուրս կան նաև հետաքննելի և զուարճալի յիշատակութիւնք. ինչպէս են նկարագրութիւն Թաթարաց բարուց և լեզուին, և ճանապարհորդութիւն Հեթմոյ արքայի առ Բաթու զանն, և այլն։

Իսկ Մեսրոպեալ աւաղելի պատմածներուն մէջ թէպէտ և չըլլան մեր ազգայնութեան կրակը զրգռող և արծարծող լուցկիք, սակայն և այնպէս ազնուական սիրտ մը չկըրնար անտես ընել իր հայրենեաց գլխէն անցած որ և է դիպուածքը. անոյշ է լալ իսկ իր հարազատ սիրելւոյն հետ՝ քան խնտալ ընդ օտարս։

Հեղինակին պատմական մթութիւնները լուսաբանելու և քանի մը վրիպակներն ուղղելու համար կարևոր սեպուեցաւ ծանօթութեամբը հրատարակել Պատմութիւնս։

ԱԶԳԱՑԻՆ ԳԻՏԵԼԻՔ

Պր. Ատոլփոս Պէրժէ Տփխիսի Ռուսաց կառավարութեան մեծ պաշտօնակալը, որ առանձին խնամքով մը ետևէ է արևելեան տեղեկութեանց, ցուցակ մը շիներ է Կովկասային երկիրներուն մէջի հայազգի ժողովրդեան։ Նոյն ցուցակն ընդունելով իրմէն Վիկտոր Լանկլուա՝ ուսումնական և հայերէն լեզուիս հմուտ Գաղղիացին, մեզի յուղարկեց փափաքելով որ Բազմավէպիս միջոցաւ ազգայնոց հաղորդենք։

	ԸՆԴՀ. ԲՆԱԿԻՉՔՆ	ՀԱՅՔ ԱՌՀԱՍԱՐԱԿ
Կառավարութիւն Տփխիսի.	542,201	104,090
» Պաքուի.	778,120	125,961
» Երևանի.	403,452	209,130
» Խութայիսի.	345,419	38,668
Տաղստան	. . .	489
Սիմաւրոփոլ	. . .	15,625
Գումարն	2,069,192	493,963

Որով բոլոր Կովկասային երկիրներուն մէջի բնակչաց ընդհանուր

Հայոց թիւն է	493,963
որոց մէջ Հռոմէականք են	14,323
իսկ Կաթուղիկոսականք	479,640

Ասով կը տեսնուի որ Կովկասային երկիրներուն բնակչացը հարիւրին քսան ու երկուն մեր ազգայինք են։